


Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարո Գրիգորի Ղաֆադարյանն իր մուտքը գիտության մեջ ազդարարեց այն տարիներին, երբ մեր պատմության, հոգևոր ու նյութական մշակույթի վրա իր մաքուր ձեռքն էր պարզել մեծ գիտնական Նիկողայոս Մառք, երբ հնչում էր մեր ճարտարապետության պսակ Անի մայրաքաղաքի զարմանահրաշ պեղումների դողանջը, երբ գնալով ալիքվում էր վիթխարի հետաքրքրությունը դեպի մեր ժողովրդի պատմական փառավոր անցյալը:



Կ. Ղաֆադարյանի անցած դժվարին ճանապարհը գիտությանը, Հայաստանի մշակույթին անձնուրաց ծառայելու, անմնացորդ նվիրումի օրինակ է: Նրա գիտական բազմարդյուն վաստակը հայագիտության անդաստանում նշանավորվել է արժեքավոր ներդրումով՝ ստվարածավալ յոթ մենագրություններով և նրա գիտական երախտիքի ոչ պակաս կարևոր մաս կազմող բազմաթիվ մասնավոր ուսումնասիրություններով, հոդվածներով: Գիտության այդ անխոնջ մշակին բնորոշ էր հայագիտության առօրյա և վաղվա ազնիվ մտահոգությունը, անաչառությունն ու շիտակ հայրենասիրությունը: Աշխատանքով և գրչով է նա հանձնել հայրենասիրության ամենամեծ քննությունը:

Կարո Ղաֆադարյանը ծնվել է 1907 թ. Ախալցխա (Ախալցխիսե) քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նրա երազանքն էր ուսումը շարունակել Երևանում: 1927 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1931 թ. ավարտել է համալսարանի հիմքի վրա ստեղծված Մանկավարժական ինստիտուտի պատմատնտեսագիտական ֆակուլտետի պատմական բաժինը: Ուսումնառության տարիների գիտական միջավայրն էլ ձևավորել, կանխորոշել է նրա նախասիրություններն ու կյանքի ուղին: Մեկ տարի աշխատել է Էջմիածնի Չեռագրատուն-Մատենադարանում, ապա մինչև 1940 թ. Կուլտուրայի պատմության՝ հետազայում Գրականության և պատմության ինստիտուտում որպես գիտական աշխատակից, ուսումնասի-

րել հայերեն ձեռագրերը, հրատարակության պատրաստել «Հայկական գրի սկզբնական տեսակները», «Ալքիմիան պատմական Հայաստանում» ուսումնասիրությունները, որոնք տպագրվել և պսակվել են Մելքոնյան մրցանակով: 1940 թ. Կ. Ղաֆադարյանը նշանակվել է Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, ինքնամոռաց նվիրվել ազգային թանգարանի վերածնման գործին: 1959 թ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության նորաստեղծ ինստիտուտում ստանձնել է բաժնի վարիչի պաշտոնը և մինչև կյանքից հեռանալը գլխավորել ինստիտուտի միջին դարերի հնագիտության բաժնի աշխատանքները: 1953 թ. «Դվին քաղաքը և նրա պեղումները» գրքի (առաջին հատոր) համար նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1961 թ. գիտությանը մատուցած ծառայությունների համար պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանին շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: Գիտական բեղուն գործունեությանը զուգընթաց, տասնամյակներ անընդմեջ նա գլխավորել է ՀՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր մշակույթի հուշարձանների պահպանության գիտամեթոդական խորհրդի աշխատանքները:

Ընդարձակ է Կ. Ղաֆադարյանի գիտական հետաքրքրությունների շառավիղը. հայոց պատմություն, հնագիտություն, ճարտարապետության պատմություն, վիճակագրություն, թանգարանագիտություն:

1939 թ. լույս է տեսնում նրա «Հայկական գրի սկզբնական տեսակները» հնագրագիտական-բանասիրական ուսումնասիրությունը: Մերժելով գրի առանձնահատկությունները գծագրական հատկանիշներով բացատրողների տեսակետը՝ հեղինակը փաստերով պնդում է, որ ճշմարիտ են այն ուսումնասիրողները, ովքեր գրերի տեսակավորման չափանիշ են համարում դրանց ոճական առանձնահատկությունները: Հայկական գրի տեսակների հնությանը դառնալով՝ հեղինակը գտնում է, որ արձանագրությունները և ձեռագիր մատյանները, բոլոր ավետարանները, հնագույն ժամանակներից մինչև XIII դ., գրվել են բացառապես բոլորգիծ երկաթագրով, և որ XIII դարից ձեռագիր գրչության մեջ համատարած է դառնում բոլորգիրը: Առկա նյութի համակողմանի քննության հիման վրա հեղինակը հանգում է այն հետևության, որ մաշտոցյան գրերի գյուտից առաջ գրեր հորինելու փորձերն ավարտվել են անհաջողությամբ: Գրերի առանձին տեսակներն են բոլորգիծ երկաթագիրը, ուղղագիծ երկաթագիրը, բոլորգիրը, նոտրգիրը և շղագիրը: Հեղինակը բազմաթիվ նյութերով վերանայում է բանասերների այն տեսակետը, թե Մաշտոցը հորինել է միայն բոլորգիծ երկաթագիրը, որ Կորյունի հիշատակած տերմինները վերաբերում են գրչության ոճերին: Այդ հինգ բառերը համապատասխանում են նրբագույնը՝ նոտրգրին, կարճը՝ ուղղահայաց երկաթագրին, երկայնը՝ բոլորգիծ երկաթագրին. առանձինը առանձին տառանշան է, կրկնավորը՝ փակագիր: Եվ որ փակագիրը, դատելով Կորյունի վկայությունից, հայտնի է V դարից:

Կ. Ղաֆադարյանի 1940-ական թվականներին հրատարակած ուսումնասիրությունների շարքում առանձնանում է «Ալքիմիան պատմական Հայաստանում» աշխատությունը (1940 թ.): Ինչպես հայտնի է, ալքիմիան լայն տարածում էր գտել միջնադարյան Հայաստանում: Ձեռագրերում դրանով զբաղվողները

XV դ. հայտնի են «աքսիր շինողներ», «քիմիականք» անվանումներով: Ալքիմիական ձեռագիրը կոչվել է «Վկայական գիրք», «Աքսիրի գիրք» և «Քիմիական գիրք»: Խիստ գաղտնի էր պահվում ժառանգաբար հորից որդուն, ամենամոտ արյան մերձավորին, ազգականին սերնդից սերունդ փոխանցվող ալքիմիական գործողությունը, ձևը, եղանակը: Դառնալով Մատենադարանի ալքիմիական ձեռագրերին՝ հեղինակն արձանագրում է, որ այդ բնագրերը միայն կեղծ ոսկի և արծաթ ստանալու եղանակները, ձևերը դասդասելու փորձեր չեն, որ հայ ալքիմիկոսները սոսկ ընդօրինակողներ չեն եղել, այլ իրենք հեղինակել են մի շարք գյուտեր: Այդ բնագրերում, որպես կանոն, գաղտնագրված են կարևոր նյութերի անունները: Ալքիմիական անհամար ձեռագրերի տարբեր խմբագրությունները բաղդատելու եղանակով հեղինակին հաջողվել է մերձենալ ալքիմիական գաղտնագրությունների վերծանմանը, ճշտել նյութերի հայկական և եվրոպական անունները: Դրանում հեղինակի համար ուղեցույց, օժանդակ աղբյուր են ծառայել Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետը» և բժշկական ձեռագիր մատյանները: Աշխատությունը կարևոր է նաև նրանով, որ երկրորդ մասում հեղինակը զետեղել է ձեռագրերից քաղած ալքիմիական բնագրերը: Գիրքը եզրափակվում է ալքիմիական նյութերի անունների, գաղտնանունների, արտասովոր դարձվածքների բառարանով:

Մեծ է Կ. Ղաֆադարյանի դերը հայ հնագիտության զարգացման ոլորտում: Դեռևս իր գիտական գործունեության արշալույսին նա սկսել է աշխատել հնագիտական արշավախմբերում: 1931 թ. մասնակցել է հին Վաղարշապատի պեղումներին: 1935 թ. ինքնուրույն պեղումներ է կատարել Կիրովականում (ներկայիս՝ Վանաձոր): 1936 թ. մասնակցել է Հովսեփ Օրբելու ղեկավարած Անբերդի արշավախմբին, հետախուզական պեղումներ կատարել Կարմիր բլուրում: 1930-ական թվականներին Կ. Ղաֆադարյանը հնագիտական, վիմագրական հետազոտություններ է կատարել նաև Հայաստանի տարբեր շրջաններում, ղեկավարել է Հնությունների պահպանության կոմիտեի մի շարք արշավախմբեր:

1937–1939 թթ. գիտնականին տեսնում ենք քաղաքամայր Դվինի պեղումները իրականացնող արշավախմբում, որը ղեկավարում էր պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանը: Հայ մշակույթի խոր ծալքերի բացահայտման գործում բացառիկ դեր ուներ միջնադարյան Դվինի ուսումնասիրությունը: Հայրենական մեծ պատերազմից հետո կյանքի են կոչվում պատերազմի տարիներին ընդհատված Դվին մայրաքաղաքի պեղումները, որոնք 1946 թ. սկսած երեսուն տարի շարունակ չմարող եռանդով գլխավորել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը: Պեղումների արդյունքները հանդիսացան մեծահամբավ քաղաքի արհեստագործության և առևտրական գործարքների կարևոր կենտրոն լինելու մասին հայ և օտար աղբյուրների, մատենագրական վկայությունների նյութականացումը: 1952 թ. լույս է տեսել նրա «Դվին քաղաքը և նրա պեղումները» խորագրով աշխատության առաջին հատորը՝ նվիրված Դվինի հնագիտական արշավախմբի 1937–1950 թթ. աշխատանքների արդյունքներին: Այս աշխատության մեջ հանգամանորեն քննության են առնվել հնագիտական առաջնակարգ մասունքներ, որոնք բացահայտում են քաղաքի ներքին կյանքի, կենցաղի, ավանդական ու ընդհան-

րական պահանջ ունեցող արհեստների արտադրանքի նմուշներ, արտաքին աշխարհի հետ ունեցած տնտեսական կապերի, տուր և առի գործարքների կծիկը բացող բացառիկ հետաքրքիր նյութեր: Ներկայացված են քաղաքի ճարտարապետական կենսագրության շղթայի գլխավոր օղակները, պեղումներով բացված Դվինի Կաթողիկե եկեղեցին, կաթողիկոսական պալատը, միջնաբերդի շինությունները, այլ կառույցներ: Նույն խորագրով աշխատության երկրորդ հատորում (1982 թ.) ներկայացված են Դվինի հնագիտական արշավախմբի 1951–1972 թթ. աշխատանքների արդյունքները, նորահայտ ճարտարապետական հուշարձանները, քաղաքի կենտրոնական թաղամասում, միջնաբերդում հայտնաբերված վիրթուարի թիվ կազմող հնագիտական նյութերը: Դվինի ապակեգործությանը, կնքադրոշմներին, Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի խնդրին է նվիրված այս հատորի հավելվածը:

Կ. Ղաֆադարյանի գիտական ժառանգության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում վիմագրագիտությունը. բնագավառ, որտեղ, արձանագրություններն ընթերցելու մեծ հմտությունից բացի, պահանջվում էր հաղթահարել եկեղեցիների, ամրոցների պատերին, խաչքարերի, գերեզմանական կոթողների վրա դրոշմված վիմագիր հիշատակարանները հավաքելու մեծագույն դժվարությունները: Նա ուներ պատմական գիտության այդ առաջնակարգ սկզբնաղբյուրները հրատարակելու իր ուրույն սկզբունքները: Նշանավոր նախորդների՝ Ն. Մառի և Հ. Օրբելու հետևողությամբ ներկայացնում էր ճարտարապետական հուշարձանի մատենական պատմությունը, զետեղում շինության չափագրությունը, արձանագրության գծանկարը, լուսանկարը, վերծանությունը, ապա տալիս ծանոթագրությունները: Այդ սկզբունքով են կյանքի կոչվել գիտնականի Հովհաննավանք, Մանահին, Հաղբաստ հուշարձանախմբերին և Երևանի վիմագիր հիշատակարաններին նվիրված մեծարժեք աշխատությունները:

«Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» (1948 թ.) խորագիրը կրող աշխատության առաջին բաժինը զբաղեցնում են մենաստանի ճարտարապետական հուշարձանների նկարագրություններն ու չափագրությունները, որոնք ընթերցողին ամբողջական պատկերացում են տալիս հուշարձանախմբի մասին: «Հովհաննավանքը պատմության մեջ» գլխում հեղինակը մատենագրական և վիմագիր աղբյուրների հիման վրա ներկայացնում է միջնադարի մշակույթի այդ կարևոր օջախներից մեկի ընդարձակ տարեգրությունը: Գրքի երկրորդ մասը կազմող «Հովհաննավանքի վիմական արձանագրությունները» բաժնում նա հավաքել, հրատարակել է հնավայրի հարյուրից ավելի բոլոր արձանագրությունները, որոնց մեծ մասը հեղինակի կողմից շրջանառվել են առաջին անգամ:

Տքնաջան և մեծարժեք ուսումնասիրություն է «Մանահինի վանքը և նրա արձանագրությունները» խորագրով ծավալուն մենագրությունը (1957 թ.): Հայ մշակույթի այս բազմադարյան կենտրոնում են գրվել բազմաթիվ ձեռագրեր, այստեղ է ընթացել հայ դպրության, մշակույթի գործիչներից մի քանիսի գործունեությունը: Մանահինի՝ այժմ էլ կանգուն գրատուն-մատենադարանում են պահվել մի քանի հարյուրների հասնող գրչագիր մատյաններ, կիրառական

արվեստի, մասնավորապես արձագանգործության, ինչպես նաև ասեղնագործության կատարյալ ստեղծագործություններ: Մենաստանի հուշարձանախումբը, որը միջնադարյան Հայաստանի ճարտարապետության գլուխգործոցներից մեկն է, իր հազարամյա որմերին պահել է շուրջ երկու հարյուր արձանագրություն, որոնք ստուգախոս, կարևոր տեղեկություններ են հաղորդում Հայաստան աշխարհում տեղի ունեցած պատմական իրադարձությունների, երկրի ներքին կյանքի, մշակույթի ամենատարբեր բնագավառների մասին: Դրանց մի զգալի մասը նույնպես առաջին անգամ է հրատարակվել:

Սանահնի վանքի հետազոտությանը հաջորդեց մերձակա Հաղբատի ուսումնասիրությունը, որի արդյունքը հանդիսացավ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի «Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները» խորագրով գիրքը (1963 թ.): Այն աչքի է զարնում նյութի պատմագիտական կուռ ու խորը քննությամբ, աղբյուրների, մատենագրական, վիմագիր նյութերի նորովի լուսաբանումներով ու ճշտումներով: Հաղբատի վանքի տարեգրությանը, ճարտարապետությանը, արձանագրություններին նվիրված այս գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին բաժնում մատենագրական, արձանագրական հարուստ նյութերի, մենաստանի ճարտարապետական կառուցվածքների հիման վրա հեղինակը որոշում է դրանց կառուցման ժամանակը: Երկրորդ՝ առավել արժեքավոր բաժնում, հեղինակը արդի գիտության մակարդակով հրատարակել է վանքի և շրջակա հուշարձանների բոլոր, շուրջ 260 արձանագրությունները, որոնց մի զգալի մասը նախկինում հրատարակվել են բազմաթիվ սխալներով ու աղավաղումներով: Մատենագրական և վիմագիր նյութերի վրա խարսխված այս աշխատության մեջ Հաղբատ մենաստանը պատկերանում է իբրև պատմական կարևորագույն իրադարձությունների վրա ձևավորված, ֆեոդալական Հայաստանի նշանավոր հոգևոր կենտրոն, կրթօջախ (Կյուրիկյանների օրոք և հետագայում՝ ընդհուպ XIX դարը):

Հովհանավանքին, Սանահնին և Հաղբատին նվիրված մենագրություններով պրոֆ. Կ. Ղաֆադարյանը ներկայանում է իբրև պատմաբան, վիմագիր հիշատակարանների ստույգ վերծանությունների, հետաքրքիր մեկնությունների հեղինակ, միջնադարի հայ մշակույթի ականավոր հետազոտող:

«Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները» գիրքը (1975 թ.) ընդգրկում է մայրաքաղաքի միջնադարյան ճարտարապետական հուշարձանները և վիմագիր հիշատակարանները: Առաջաբանից տեղեկանում ենք, որ հեղինակը կամեցել է ուսումնասիրել Երևանի հնագիտական բոլոր հուշարձանները և ամփոփել ստվար հատորում: Համոզվելով, որ այդ ծրագրի իրականացումը մեծ, տևական աշխատանք է պահանջում, նա իր աշխատության շրջանակները սահմանափակում է Երևանի միջնադարյան հուշարձաններով: Երևանին նվիրված աշխատության նյութի ընտրությանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ հեղինակը հավաքել էր Երևանի հնավայրերի՝ Կաթողիկե եկեղեցու, Կոզեռնի գերեզմանատան, Պողոս-Պետրոս եկեղեցիների արձանագրությունները, պեղումներ կատարել, ուսումնասիրել է Ավանի տաճարը, հնագիտական ուսումնասիրություններ կատարել «Արա-

րատ» գինու գործարանի տարածքում և այլուր: Գրքում տեղ գտածներից հետաքրքրական է Երևանի արձանագրություններից հնագույնը՝ Աբովյան փողոցի վրա, Գիտությունների ակադեմիայի հին շենքի բակում, ժամանակին մեծ ջանքերի գնով պահպանված եկեղեցու պատին, որը պատմում է Երևանը պարոն Ավետյաց որդի հայազգի Սահմադինի կողմից հողով ու ջրով գնելու մասին: Երևան քաղաքի պատմության կարևոր վավերագրեր են XIV–XIX դդ. վիճակի արձանագրությունները:

Հայագիտության մեջ կարևոր ավանդ են նաև նրա ոչ մենագրական բնույթի ուսումնասիրությունները: Գիտական հետազոտությունների այդ շարքում հատկապես առանձնանում է «Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը» (1945 թ.): Տուֆե երեք սրբատաշ քարերի վրա փորագրված երկլեզվյան այդ ծածկագիր արձանագրությունը, ինչպես եզրակացնում է հեղինակը, գրվել է ցույց տալու համար, որ Եզր կաթողիկոսն աստծու ճշմարիտ ծառան է, որ նա իր կրոնական ըմբռնումներով ընթանում է ճշմարիտ շավղով: Մասամբ հունարեն, մասամբ էլ հայերեն ծածկագրով դրոշմված արձանագրության քննության հիման վրա, գիտնականը հանգում է այն համոզիչ հետևությանը, որ հայերեն ծածկագիրը ստեղծվել է ոչ թե XI–XII դդ., այլ VII դարից էլ առաջ: Պարզվում է, որ Ավանի տաճարը, գյուղաքաղաքի բնակչությունը՝ Հովհան հակաթոռ կաթողիկոսից մինչև XIII դ. վերջը եղել է քաղկեդոնական, որ այն կազմել են Ավանի տաճարի քաղկեդոնիկ միաբանները առանց Եզրի անմիջական մասնակցության:

Կ. Ղաֆադարյանի ավելի քան 70 հոդվածներում, որոնք հրատարակվել են գիտական ամենատարբեր ժողովածուներում, հայրենական և արտասահմանյան գիտական հանդեսներում, ակադեմիական մամուլում, մասնավորապես հայագիտական «Պատմա-բանասիրական հանդես» և «Լրաբեր հասարակական գիտությունների «պարբերականների էջերում, նա ներկայանում է իր գիտական նախասիրության, հետաքրքրությունների բազմերանգ դրսևորումներով: Փաստական նյութի հարստությամբ, հիմնավոր, խոր վերլուծությամբ են աչքի ընկնում Կ. Ղաֆադարյանի «Կարմիր բլուրի նորագյուտ սեպագիր արձանագրությունը» (1937), «Երևանի Կաթողիկե տաճարի վիճակի արձանագրությունները» (1938), «Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին» (1940), «Դամբարանների պեղումներ Կիրովականում» (1941), «Զվարթնոցի վերականգնման մի անհաջող փորձ» (1958), «Զվարթնոց» (դիտողություններ) (1959), «Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը» (1962), «Հայաստանի Պետական պատմական թանգարանը» (1962), «Հայաստանի միջնադարյան թանգարանները» (Անդաստան, հանդես -13, Փարիզ, 1962), «Հադրասի ճարտարապետական մի քանի կառուցվածքները» (1963), «Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ» (1967), «Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ» (1968), «Հնագիտական աշխատանքը Հայաստանում սովետական շրջանում» (1970), «Հայ ճար-

տարապետության պատմության պարբերացման հարցի շուրջը» (1971) հոդվածները:

Պաշտամունքի էր հասնում նրա ակնածանքը հայ ժողովրդի մշակույթի մեծերի նկատմամբ: Մշտապես հայագիտության բարձր շահերով ապրող գիտության անխոնջ մշակ Կ. Ղաֆադարյանը Հայրենական մեծ պատերազմի դժվարին տարիներին իր խորին հարգանքն է մատուցել Թորոս Թորամանյանի հիշատակին. Պատմության թանգարանի տնօրենի աշխատանքային բազմազբաղ պայմաններում կյանքի է կոչել հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թ. Թորամանյանի սխրալից կյանքի, նրա գիտական ժառանգության ստվարածավալ երկհատոր հրատարակությունը՝ Հակոբ Կոջոյանի բարձրաճաշակ ձևավորումով: Կ. Ղաֆադարյանի հայագիտությանը մատուցած այդ մեծ ծառայության շնորհիվ մեր առջև ծառանում է Թ. Թորամանյանի՝ գիտության այդ հսկայի կերպարը: Թ. Թորամանյանի հատորներում ներկայացված է մեր ազգային ճարտարապետության զարգացման ընթացքը, բացահայտված են նրա օրինաչափությունները, կատարված է հայ ճարտարապետության պատմության պարբերացումը: Աշխատությունների երկրորդ հատորը կազմողի կողմից պատրաստվել է չհրատարակված, նոր նյութերի հիման վրա: Հատորում զետեղված են ճարտարապետի գիտական օրագրերն ու զեկուցագրերը, ճամփորդական և հնագիտական պեղումների տեղեկագրերը: Այդ հատորը ձևավորել է ճարտարապետ Լիպարիտ Մադոյանը: Թորամանյանի պայծառ հիշատակին տրված մեծ երախտագիտության այդ տուրքը ջերմ արձագանք գտավ մասնագետների և ընթերցող լայն խավերի շրջանում: Գրքի հրատարակությունն էլ ավելի խթանեց հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրությունը:

Պրոֆ. Կ. Ղաֆադարյանի գործունեության մեջ մեծ տեղ է զբաղեցնում գիտակազմակերպչական աշխատանքը: Բնչպես ասվեց, 1940 թ. ստանձնելով Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրենի հոգսաշատ պարտականությունը, նա ամբողջովին նվիրվեց մեր ազգային թանգարանի վերածնության գործին. թանգարանագիտական խոր իմացությունների շնորհիվ ստեղծվեց հայ ժողովրդի պատմության բոլոր ժամանակաշրջաններն ընդգրկող գիտական հիմնական ցուցադրություն: Այսօրվա մեր բազմահարուստ ազգային թանգարանի համար մենք մեծապես պարտական ենք Կ. Ղաֆադարյանի 25-ամյա գործունեությանը:

Կ. Ղաֆադարյանը շնորհակալ գործ է կատարել նաև գիտամանկավարժական գործունեության բնագավառում: Երկար տարիներ Հայաստանի հնագիտության դասընթաց, հայ մշակույթին նվիրված դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, երիտասարդությանը հասու դարձրել մեր մշակույթի խորությանն ու վեհությանը, ղեկավարել է բազմաթիվ ասպիրանտների: Կ. Ղաֆադարյանի՝ գիտնականի և մարդու իմացությունն ու փորձը դաստիարակել է մի ամբողջ սերունդ, որն այսօր իր կարևոր նպաստն է բերում Հայաստանի հնագիտությանը:

Մեծ է պրոֆ. Կ. Ղաֆադարյանի գիտական հունձքը և ըստ արժանվույն գնահատված: Նա պարզևատրվել է «Պատվոն նշան», «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով և մեդալներով:

Գիտնականն օժտված էր նաև մարդկային լավագույն հատկանիշներով. անձնական մեծ հմայք, սկզբունքայնություն, անաղմուկ վարքագիծ: Նրա պայծառ կերպարը դեպի իրեն էր ձգում այնպիսի մարդկանց բարեկամությունը, ինչպիսիք էին Ավետիք Իսահակյանն ու Մարտիրոս Սարյանը, Հովհաննես Բաղրամյանն ու Հակոբ Կոջոյանը, Մանուկ Աբեղյանն ու Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանն ու Դերենիկ Դեմիրճյանը:

Ճշմարիտ գիտության շահագրգռություններով ապրող, իր հանդեպ միշտ պահանջկոտ գիտնականը երբեք չակնկալեց շոայլ գովեստներ: Ապրեց միշտ համեստ ու խանդավառ: Նա սիրում էր կյանքը և կյանքի բոլոր մանրամասները, երիտասարդ էր հոգով, գնահատում էր ամենօրյա ներկան ու իրականը: Կյանքից հեռանալուց առաջ հաճախ էր ցավով ասում, թե կյանքն ընդամենը մի փոքր փախուստ է մահից: Սերունդների մեջ միշտ պայծառ կմնա նրա՝ բազմավաստակ ու նվիրական հիշատակը:

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ  
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ